

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ  
դպրոց» ՊՈԱԿ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝** Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության  
և ստեղծագործական ունակությունների զարգացումը  
մաթեմատիկա առարկայի դասավանդման ընթացքում

**Կատարող՝** Մելինե Գիլոյան

**Ուսումնական հաստատություն՝** Արարատի մարզ, «Ռանչպարի  
միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

## Բովանդակություն

Ներածություն-----	3
1.Գրականության ակնարկ-----	5
1.1. Ինքնուրույնություն-----	5
1.2. Ստեղծագործական մտածողություն-----	7
2.Գործնական համատեքստ-----	9
3.Եզրակացություն -----	14
Օգտագործված գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ -----	15

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### **Թեմայի արդիականությունը:**

Արագ փոփոխվող կյանքը, գիտության և տեխնիկայի շարունակական աճը սովորողից պահանջում են աշխատանքային շուկային արագ հարմարվելու ճկունություն: Սրանից հետևում է, որ ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկը պետք է լինի աշակերտների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, աշակերտների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը: [3]

### **Հետազոտության նպատակը և խնդիրները:**

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

- Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժական միջոցները
- Պարզել, թե ինչպես են ազդում խմբային աշխատանքները աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման վրա:

➤ Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ինքնուրույնության խթանման գործում:

➤ Առաջարկել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ:

### **Հետազոտության օբյեկտը և առարկան:**

Հետազոտության օբյեկտ է հանդիսանում սովորողի ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները, իսկ առարկան՝ դրանց զարգացումը մաթեմատիկայի դասավանդման ընթացքում:

### **Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:**

Հետազոտական աշխատանքի իրականացման համար տեսական հիմք են հանդիսացել սեփական փորձի վրա հիմնված եզրակացությունները և վերլուծությունները, այլ հետազոտողների կատարած աշխատանքները: Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են շատ մեթոդներ, այդ թվում՝ վերլուծական, համեմատական, դեմոնստրացիայի մեթոդները:

### **Ավարտական աշխատանքի կառուցվածքը:**

Աշխատանքը կազմված է 15 էջից և ներառում է չորս աղյուսակ: Բաղկացած է ներածությունից, գրականության ակնարկից՝ երկու ենթագլուխներով, գործնական համատեքստից, եզրակացությունից և օգտագործված գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներից:

## 1. Գրականության ակնարկ

Ըստ Ա. Մորոզովի նախաձեռնողականությունը, համագործակցությունը, ինքնուրույնությունը և ստեղծագործական մոտեցումը բնավորության այնպիսի գծեր են, որոնք բոլոր ժամանակներում նպաստել են մարդու հաջողություններին, նրա առջև ծագած խնդիրների լուծմանը, իսկ արագ փոփոխվող ժամանակակից աշխարհում դրանք ստանում են նոր հնչեղություն: [2]

Եվ հանրակրթական դպրոցի առաջնահերթ խնդիրներից է սովորողների մոտ նման որակների ձևավորումը և զարգացումը: Իսկ դրա իրականացման լավագույն ճանապարհներից մեկը՝ ուսուցչի և աշակերտների ստեղծագործական համագործակցությունն է: Հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի արագ փոփոխվող հասարակությունում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը, իսկ արդյունքում՝ նպաստակառուղիված վերջնարդյունքները.

- դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.
- հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.
- համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ
- անի եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա
- փաստերն օգտագործի իր գաղափարները հիմնավորելու համար և ներկայացնի ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով. [5]

### 1.1. Ինքնուրույնություն

Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Մինևույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային

փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Գիտակցելով, որ ինքնուրույնությունը անձի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, բազմաթիվ ժամանակակից գիտնականներ ուշադրությունը կենտրոնացրել են դրա էության ուսումնասիրության վրա: Իսկապես, ինքնուրույնության դաստիարակման խնդիրը ենթադրում է այդ ֆենոմենի հստակ սահմանում և դրա հատկանիշների առանձնացում:

Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի, Ֆինքնուրույն! հասկացությունը ունի մի քանի սահմանումներ .

- Անկախ, ազատ
- Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն
- Մյուսներից առանձնացված
- Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և ուղղորդման
- Կողմնակի ազդեցությունից անկախ

Զ. Շինտարը ինքնուրույնության ֆենոմենը սահմանում է , որպես «անկախություն, անձի ձգտում և ունակություն, գործողություններ կատարել առանց շրջապատող անձանց օգնության» :[3]

Ինքնուրույնությունն ցուցաբերելու կարողությունը սովորողների մոտ ձևավորվում է դեռ վաղ մանկական տարիքից, սակայն, այն ավելի խորանում և կատարելագործվում է դպրոցում, որի մեջ մեծ ավանդ ունի հատկապես մաթեմատիկան:

Հայտնի է Ֆ. Էնգելսի կողմից տրված և արդեն դասական դարձած՝ «Մաթեմատիկա» առարկայի սահմանումը. «Մաքուր մաթեմատիկայի ուսումնասիրման օբյեկտը իրական աշխարհի տարածական ձևերն ու քանակական հարաբերություններն են, այսինքն՝ միանգամայն իրական նյութը»:

Պատմականորեն մաթեմատիկայի էլքային հասկացությունները՝ «բնական թիվն» ու «երկրաչափական պատկերը», փոխառված են իրական աշխարհից, այլ ոչ թե ծնվել են որևէ մեկի ուղեղում, որպես մաքուր մտածողության արդյունք:

## **1.2. Ստեղծագործական մտածողություն**

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից:

Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել: Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից:

Այսպես օրինակ, Ե. Տունիկը առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

➤ Մտքի սահունություն

- Մտքի ճկունություն
- Մտքի օրիգինալություն /յուրօրինակություն
- Մտքի մշակվածություն

Դպրոցում աշակերտների ստեղծագործականության խթանման գործում կարևոր նախապայման է մանկավարժի ներագդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա:

Այսպիսով, ստեղծագործականությունը աշակերտի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:



## 2. Գործնական համատեքստ

Կան բազմաթիվ մոտեցումներ, որոնց արդյունքում սովորողները յուրացնելով մաթեմատիկական գիտելիքները և լուծելով մաթեմատիկական խնդիրներ, յուրացնում են նաև որոշակի մաթեմատիկական մեթոդներ: Եվ այս մեթոդները հետագայում կիրառվում են ինչպես մաթեմատիկայում, այնպես էլ առօրյայում: Այսինքն՝ շարունակաբար մաթեմատիկայով զբաղվելը զարգացնում է մաթեմատիկական մտածելակերպ և մտածողության մաթեմատիկական որակ: Այսինքն՝ եթե մենք ուսումնասիրում ենք մաթեմատիկա, անհրաժեշտ է չանտեսել մեթոդները, շեշտը դնելով միայն գիտելիքների վրա: Եթե մենք կարևորենք մաթեմատիկական մեթոդները, ուրեմն մաթեմատիկական գիտելիքները կյուրացվեն ինքնըստինքյան, և կունենանք ավելի լավ արդյունք: Իսկ եթե կենտրոնանանք միայն մաթեմատիկական գիտելիքների վրա, հնարավոր է, որ նույնիսկ այդ գիտելիքները ժամանակի ընթացքում մոռացվեն:

Սովորաբար մաթեմատիկական խնդիրների լուծման գործընթացը սկսում ենք նրանից, որ ինքներս մեզ բացատրում ենք խնդրի իմաստը և փնտրում ենք սկզբնական կետեր դրա լուծման համար: Արագ լուծել փորձելու փոխարեն մենք կարծիք ենք կազմում լուծման ձևի և նշանակության մասին ու պլանավորում խնդրի լուծման ճանապարհը: Երբեմն քննարկում ենք նմանատիպ խնդիրներ և գտնում բուն խնդրի հատուկ դեպքերը և ավելի պարզ ձևերը, որպեսզի ստանանք պատկերացում դրա լուծման մասին: [4]

Խնդրի լուծման ընթացքը ճիշտ հասկանալը և այն որպես մեթոդ ընկալելը կարող են զարգացնել սովորողների մաթեմատիկական մտածողությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողությունները, նաև նպաստել հաղորդակցական և այլ կարողությունների ձևավորմանը:

Ընտրվել է 6-րդ դասարանը : Դասարանում սովորում են 21 աշակերտ:

Նախ և առաջ անհրաժեշտ է ցուցաբերել հանգիստ, հարգալից և համբերատար մոտեցում ,նրանց չշտապեցնել, չլարել, չճանրաբեռնել բազում առաջադրանքներով միանգամից: Անհատական մոտեցում ցուցաբերել երեխաներին , հաճախ ֆիզիկական

դադարներ իրականացնել, վերհանել յուրաքանչյուրի խնդիրները և փորձել լուծումներ գտնել: Այսինքն իրականացնել որոշակի արդյունավետ հնարներ և մեթոդներ՝ որակյալ ուսումնառություն կազմակերպելու համար:

Մատուցվող դասի թեման Տոկոսներն են: Աշակերտների մոտ հետաքրքրություն առաջեցնելու, մոտիվացնելու և ուշադրությունը կենտրոնացնելու համար դասը սկսում ենք խաղի միջոցով՝ նպատակն է աշակերտներին հնարավորություն տալ բացահայտելու «տոկոս» հասկացությունը և ձևակերպելու այն ինքնուրույն: Առաջին ժամի համար կատարում ենք հետևյալը:

Կատարման ժամանակը 20 րոպե:

### Ընթացքը

Գրատախտակին մեծ տառերով գրում ենք «Տոկոս» և դիմում աշակերտներին. « Ի՞նչ էք հասկանում «տոկոս» ասելով: Երբևէ լսե՞լ էք այս բառը»: Աշակերտների հնչեցրած բոլոր պատասխանները գրում ենք գրատախտակին:

Այնուհետև 10 աշակերտի հրավիրում ենք գրատախտակի մոտ և բաժանում 2 խմբի՝ աղջիկների և տղաների: Նստած աշակերտները հաշվում են տղաների և աղջիկների թիվը, այդ թիվը գրում ենք գրատախտակին: Ուսուցիչը հայտնում է, թե աշակերտների որ տոկոսն են կազմում տղաները, որ տոկոսը՝ աղջիկները:

Որից հետո փոխում ենք աշակերտների թիվը, նորից նրանց տրոհում խմբերի (օրինակ՝ ըստ մազերի գույնի, կամ ըստ գրիչով կամ մատիտով գրողների և այլն) և նորից հայտնում տոկոսները:

Այս ցուցադրումների ժամանակ աշակերտների ուշադրությունը հրավիրվում է այն բանի վրա, որ խմբերի տոկոսների գումարը 100 է, այսինքն՝ աշակերտների ամբողջ խումբը բոլոր դեպքերում համարվում է 100 տոկոս:

Այնուհետև առաջարկում ենք(5 րոպե) խմբերով քննարկել « Ի՞նչ էք հասկանում «տոկոս» ասելով» հարցը և ներկայացնել: Խմբերի ներկայացումների ժամանակ օգնում ենք կատարել ճիշտ ձևակերպումներ: [1]

Սահուն անցում ենք կատարում տոկոսների վերաբերյալ խնդիրների լուծմանը, որի ընթացում շարունակում ենք հարցադրումների միջոցով ամրապնդել նոր նյութը:

Երկրորդ ժամին, երբ արդեն յուրացվել է «Տոկոս» հասկացությունը, աշակերտների մոտ ամրապնդելու և երկարաժամկետ հիշողության մեջ փոխանցելու համար կատարում ենք խմբային աշխատանք:

Ստեղծագործական միտքը զարգացնելու համար հրաշալի լուծում է խաղ-խնդրի կիրառումը: Խաղի կանոններին համաձայն դասարանը բաժանվում է մի քանի խմբի, խմբերից յուրաքանչյուրը տոկոսի վերաբերյալ մի խնդիր է կազմում մրցակից խմբերի համար: Զարգանում է ստեղծագործական միտքը, ճկունությունը և արագ կողմնորոշվելու ունակությունը: Հաշվի է առնվում համատեղ աշխատանքը, միմյանց օգնելու և տարբեր կարծիքներ լսելու, ընդունելու կարողությունը:

Պլանավորելով և գնահատելով յուրաքանչյուր դաս , նաև հավաքագրելով դասալսողների դիտարկումները կատարեցինք հետևյալ վերլուծությունը:

**Ինքնագնահատման հարցաթերթ**

<b>Հարցերը</b>	<b>%</b>
Դասի թեման հետաքրքիր էր	52
Թեմայի վերաբերյալ հարցեր եմ տվել	10
Պատասխանել եմ թեմայի վերաբերյալ հարցերին	30
Առաջադրանքը կատարեցի հեշտությամբ (նշել առաջադրանքի համարը)	41
Առաջադրանքը հետաքրքիր էր ( նշել առաջադրանքի համարը)	58
Առաջադրանքը ցանկանում եմ նորից քննարկել (նշել առաջադրանքի համարը)	28

**Ինքնագնահատման հարցաթերթ**

<b>Հարցերը</b>	<b>%</b>
Դասի թեման հետաքրքիր էր	87
Թեմայի վերաբերյալ հարցեր եմ տվել	52
Պատասխանել եմ թեմայի վերաբերյալ հարցերին	75
Առաջադրանքը կատարեցի հեշտությամբ (նշել առաջադրանքի համարը)	60
Առաջադրանքը հետաքրքիր էր ( նշել առաջադրանքի համարը)	90
Առաջադրանքը ցանկանում եմ նորից քննարկել (նշել առաջադրանքի համարը)	10

1-2 դասաժամերին սովորողների ներգրավվածությունը ըստ դասալսողների անկետաների և իմ դիտարկումների ներկայացնում եմ աղյուսակերով:

Առաջին ժամ ներկա 21 աշակերտ

Սովորողի ներգրավվածությունը բնորոշող վարքագիծ	Իմ դիտարկմամբ տվյալ վարքագիծը դրսևորող աշակերտների թիվը	I դասալսող տվյալ վարքագիծը դրսևորող աշակերտների թիվը	II դասալսող տվյալ վարքագիծը դրսևորող աշակերտների թիվը
Մասնակցում է դասին	18	17	18
Մասնակցում է խմբային աշխատանքին	20	21	21
Հարցեր է տալիս	7	9	8
Պատասխանում է հարցերին	16	17	17
Կատարում է գրառումներ, կամ ներկայացնում է խմբի աշխատանքը	18	18	17
Հետաքրքրված է	15	15	17
Անտարբեր է	1	2	1
Այլ վարքագիծ			

Երկրորդ ժամ ներկա 20 աշակերտ

Սովորողի ներգրավվածությունը բնորոշող վարքագիծ	Իմ դիտարկմամբ տվյալ վարքագիծը դրսևորող աշակերտների թիվը	I դասալսող տվյալ վարքագիծը դրսևորող աշակերտների թիվը	II դասալսող տվյալ վարքագիծը դրսևորող աշակերտների թիվը
Մասնակցում է դասին	18	17	18
Մասնակցում է խմբային աշխատանքին	20	21	21
Հարցեր է տալիս	7	9	8
Պատասխանում է	16	17	17

հարցերին			
Կատարում է գրառումներ, կամ ներկայացնում է իմբի աշխատանքը	18	18	17
Հետաքրքրված է	15	15	17
Անտարբեր է	1	2	1
Այլ վարքագիծ			

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հենվելով թեմատիկ մանկավարժական գրականության ուսումնասիրության, ինչպես նաև իմ մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձի վրա, կարող եմ եզրակացնել, որ սովորողների մոտ ինքնուրույնության և ստեղծագործականության զարգացման համար կարևոր է, որպեսզի նրանց համար ստեղծվեն սովորելու բարենպաստ պայմաններ, որոնց պարագայում նրանք հնարավորություն կունենան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, գտնել խնդիրների լուծումներ, հաղթահարել ուսումնառության ընթացքու հանդիպած դժվարությունները:

Խմբայի խաղերի մեթոդով անցկացվող դասը աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է, որը թույլ է տալիս աշակերտներին գործնականում կիրառել ուսուցչի հաղորդած և նրանց կողմից յուրացված գաղափարներն ու բառապաշարը:

Կարևոր դրույթներից է այն , որ ապահովվում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը, այսինքն վեր հանելով սխալ գաղափարները կատարվում է շտկում՝ զարգացնելով ստեղծագործականության , ինքնաճանաչողականության կարողունակությունները:

Այս համատեքստում կարևոր և առանցքային է նաև մանկավարժի դերը: Նրա խնդիրն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, որի պարագայում աշակերտները հետաքրքրված և շահագրգռված կլինեն ուսումնական գործընթացով, կձգտեն ակտիվության և նախաձեռնողականության, ինչպես նաև ընդհանուր ինքնուրույնության: Դրա համար մանկավարժը կարող է կիրառել ուսումնական գործունեության կազմակերպման նորագույն մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաները, աշակերտների հետ աշխատանք կատարելու անհատական և խմբակային ձևեր, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքներ և այն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Մեթոդներ և խաղեր մաթեմատիկայի դասավանդման համար : V դասարան : Ձեռնարկ ուսուցիչների համար / Ն. Բայաթյան, Ի. Վարդանյան, Վ. Վարդանյան. [1]
2. «Հարցադրումների մեթոդի կարևորությունը սովորողների ստղծագործականության ձևավորման և զարգացման գործընթացում» Աննա Մանուկյան. Արմավիր- 2022թ. [2]
3. «Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացում խաղի միջոցով» Նունե Չանախյան. Երևան-2022թ. [3]
4. «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» Այվազյան Էդվարդ,Երևան ԵՊՀ հրատարակչություն 2016 [4]
5. ՀՊԶ 2021, (II, 2-րդ կես) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788/> [5]